...ՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳՐԱՄ

ՊՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ

M. BENIARD
Poste Restante
Londres. [Angleterre].

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով և ժողովրդի համար

Խրաքանչիւրի և ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն։

ԶԱՐԿ

ԵՐԳԻՉԱԲԱՆԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵԿԱՆ· · · · · · 5 ֆրանկ
ԿԷՍ ՏԱՐՒԱՆ· · · · 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ· · · · ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը։

Արեան ճահիճներ — ահա՛ ազատութեան ճանապարհը։

Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր և ձեռք բեր։

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 7 ՆՈՅԵՄԲԵՐ Nr 7 | 1894 | ՄԻԱՄՍԵԱՅ

ՊԱՅԹՈՒՄԵՆ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ ԵՒ ՓՈԹՈՐԿԸ ՎԱՌՆ, — ԲԱՅՑ ՆԱ, ՀԸՊԱՐՏԸ, ԿԱՆԳՆԱՒ Ի ՎԵՀ, ԱՆՇԱՆԿՑԵԼԻ...

ԿԵՑՑԵՆ ԱՄԵՆՔԸ·

Ձեռքերը լի արիւնով, բերանը լի փրփուրով՝ մեծն փադիշահը, քերելով իր կլօրիկ փորը, ցնծութեամբ հիանում է իր համիտիէների, իր ղօրքերի, իր զէնքերի ու թնդանօթների Սասունում կատարած հրաշագործութիւնների վերայ։ Կեցցէ՛ փադիշահը. իրան միայն այդ վայրենի փառքն էր պակաս, այդ էլ ունի այժմ։ Կեցցէ՛ն համիտիէներ, որ իրանց տարակուսելի սիրագործութիւններով սուլթան Համիդի արդէն պանծալի անունն են անմահացնում։

Եւ կիներ, և երեխաներ, և ծերեր, և երիտասարդներ հարիւրներով, հազարներով անօգնական, սովատանջ, մերկ, գլորվում են վեհափառ սուլթանի քաջ զօրքերի ու քիւրդերի հարուածների տակ, կուլ են գնում Կրուպպի սքանչելի թնդանօթների անյատակ կոկորդը։ Կեցցէ՛ն դիակներ... Կեցցէ՛ մահը, որ իրանով պէտք է ծնունդ տայ գեղեցիկ, ոսկեգանգուր, կարմրայտ, հրաշալի, հրաբորբոք, բոցեղէն մանկան։ Այդ մանուկն անուանվում է Ազատութիւն.— Կեցցէ՛ Ազատութիւն։

Ճակատն ու կուրծքը ներկված արիւնով, իր նման քաջերի հազարաւոր դիակների գլխին ծնկաչոք, Սասունցին, մինչդեռ իր խորունկ վէրքը դեռ ծխվում է, կարկառում է իր արիւնոտ ձեռքերը և ուղղում արիւնալի աչքերը դէպի.... Հայ հասարակութիւնը։ Այս մէկը, կարծես առասպելական դևի քնից հազիւ զարթնած, դէպի տարիներով արած աղերսանքը խուլ մնացած, յանկարծ վեր թռչելով, աչքերն է տրորում, աջ ու ձախ ընկնում և պօռում, կանչում —Կեցցէ՛ Սասունցի.... Այո՛ կեցցէ՛. կեցցէ՛ նաև հայ հասարակութիւն, որ ճիշտ ժամանակին հասաւ՝ հաւաքելու համար սպանված քաջերի ու անմեղների դիակները, հոգոց կարդալու նրանց գլխին և արեան հեղեղների ճանապարհը հարթելու, որպէսզի „ծառայութիւն մատուցած լինի“... Կեցցէ՛ ծառայութիւն...

Կեցցէ՛ ծառայութիւն, որ տարիների անվերջ պաղատանքից յետոյ այլ ևս շատ ուշ և մէկ ուրիշ աշխատութեան համար երևան եկաւ, թողած լինելով Սասունցիին մենակ կատաղած գազանների ճանկերում։

Գազանները շատ խիստ սեղմեցին Սասունցիին։ Խեղդվելով, շնչասպառ՝ Սասունցին յանկարծ ճչաց, պօռաց, կատաղեց, դուրս պրծաւ և ընկնելով առաջին պատահած երկաթի, բահի, կացնի, հնացած սրի ու չախմախլուի վրայ, այծեամի պէս ցատկեց, մագլցեց իր սիրած ապառաժուտ բերդը և այն տեղից՝ վերից, բարձրից՝ խուլ հայերի և աշխարհի ականջին իր ամբողջ կրծքով գոչեց, որոտաց — Կեցցէ՛ Ապստամբութիւն....

ԻՄ ՊԵՐԿԻՑ

Ամեն տեսակ ազատութիւններ թոյլատրելի չեն. ինչպէս, օրինակ, զբաղատելու, բանբասելու, ծեծելու, չարախօսելու, ստելու, խաբելու և նոյնօրինակ ազատութիւնները։

***

Թիւրքական տէրութիւնն այն հաղագիւտ երևոյթներից է աշխարհում, որոնց ապագայում կը գնեն ի ցոյց պատմական թանգարաններում։

***

Ի նկատի չառնելով այն, որ կիսակործան Թիւրք՝ տէրութիւնն իր գոյութիւնը պահպանում է միայն եւրոպական տէրութիւնների շահերի հակադրութիւնների շնորհով, եւրոպական մի քանի պատմաբաններ զարմացած բացականչում են, թէ „ի՞նչ անախորժիզմ է կիսավայրենի թիւրք բռնակալութեան գոյութիւնը եւրոպական քաղաքակրթված ազգերի ծոցում։“ Մեզ թւում է, որ այդ պատմաբաններն իրանց սխալը նկատած կը լինէին, եթէ իրանց զարմանքը փոխադրէին մէկ ուրիշ կէտի վրայ. այն է, թէ ի՞նչպէս Եւրոպան համբերող կերպով տաքացնում է իր գրկում թիւրք տէրութեանը և պաղարիւն կերպով դիտում նրա երկրում կատարված ու կատաւող գազանային արհաւիրքները։

***

Բռնակալութիւնը (դէսպոտիզմը) այն սկզբունքն է, որով բռնակալն արդարացնում է իր բոլոր գազանութիւնները՝ գործադրված մարդկանց վրայ։

***

Իր ժամանակի առաջադէմ՝ գաղափարների ու նպատակների համար կատարած յեղափոխութիւնը մէկ ազգի համար քաւարան է։

***

Միջավայրը մարդու համար ներկայանում է իբրև մի սարդոստայն, որ առհասարակ սահմանում է նրա հոգեկան ու ֆիզիկական (կաբեկան) ընթացքն ու կերպարանքը։

***

Թիւրք կառավարութիւնը մեզ ասում է՝ հանդարտ եղէք. այո՛ —եթէ մեզ թողնէին ապրել, այո՛ —եթէ մեզ թողնէին զարգանալ, այո՛ —եթէ մեզ թողնէին հանդարտ։

***

Երբեմն կուզէք քարոզեցէք, թէ „սիրեցէք միմեանց, եղէք իբրև եղբայրներ“, այդ բոլորն անպտուղ կը լինեն եւ խորթ ու վատ կը հնչեն, մինչեւ որ չը վերացվեն ներկայ հասարակական յարաբերութիւնները, մարդը մարդուն շահագործելը, որոնք են ստեղծողներն ամեն տեսակ թշնամութիւնների, անիրաւութիւնների ու թշուառութիւնների մարդկանց մէջ։

ԱՐԵՒԱԾԱԳԻՆ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՆՈՒՐԷՐ ՏԻԿԻՆ Մ. Ն... ԻՆ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

ՕՐԻԱՑ ԽՆԴԻՐԸ

Ամառնային եղանակը բոլորովին անտանելի է Ա... քաղաքում։ Դէմ առ դէմ կանգնած ապառաժները, արեւի սաստիկ ջերմութիւնից տաքանալով, դառնում են մի կատարեալ փուռ, որի մէջ տեղային բնակիչներն անշուշտ կը տապակվէին, եթէ բնութիւնը մէկ ուրիշ բարիք մատակարարած չը լինէր դրա առաջքն առնելու համար։ Եէշիլ-Ըրմագը, անցնելով քաղաքի ճիշդ կենտրոնից, իր սառը ջրով մի քիչ մեղմացնում է խեղդող, խաշող օդի ազդեցութիւնը։ Գետի արեւելեան ափի երկարութեամբ շինված են բազմաթիւ թիւրքական զահվէխաներ, փառաւոր կաղնիներ, որոնց մէջ թափվում են թիւրք, հայ բնակիչները, նստոտում պարզ սեղանների առաջ, ծխում, զահվէ խմում եւ ձիւնախառն սառը ջրով մարում իրանց մարմնի այրող կրակը։ Նրանց մէջ կարող էք գտնել ամեն կարգի եւ աստիճանի մարդիկ. կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեաներ, բէկեր, աղաներ, որոնք ոտք ոտքի վրայ նետած, իրանց դեղին սաթի խոշոր հատիկներով տէր ողորմեան են „քաշում“, եւ արհամարհական ակնարկներ գցում կոշտ ու կոպիտ ձեռքերով արհեստաւորների, ալիւրի փոշիից ըսպիտակացած ջաղացպանների եւ տեղային թիւրք բօշաների վրայ։ Կաղինների մէկից լսվում է աղուղների սաղի զնկզնկոցը, որոնք մեծ եռանդով մրցում են միմեանց հետ։ Կաղինի ճակատի պատից կախված է խոշոր շրջանակի մէջ առնված մի թղթի կտոր, որի վրայ թիւրքերէն տառերով եւ էրջէդ հիսաբիով գրված է երեւելի մուամման (հանելուկը), որը շինել է վարպետ աշուղը, եւ միւսներ աշխատում են լուծել նրան։ Շրջանակը պատված է մոմով, որի վրայ թրքական ամեն տեսակ ըստակներ կարելի է տեսնել. մէջիդի քառորդ, կէս մէջիդ, մի մէջիդ եւ մինչև անգամ օսմ. լիրա, որ, ի հարկէ, կպցրել է բէկ էֆէնտիներից մէկը, միաժամանակ հպարտ ակնարկներ գցելով նստող ժողովրդի վրայ, իմանալու՝ թէ արդեօք ինչ ազդեցութիւն գործեց իր առատաձեռնութիւնը։ Աշուղներն իրանց կարգին ամենամեծ գովեստներ են շռայլում նրան։ Իւրաքանչիւր ներս մտնողն իր պարտքն է համարում իր կարողութեան չափ, ամենաքիչ քառորդ մէջիդից սկսած՝ մոմի վրայ փակցնել մի գումար, ապա երթալով ծալապատիկ նստում է զահվէաան ներսը՝ պատերի տակ՝ պարզ ու կոշտ տախտակներից շինված կեղտոտ բաղմոցի վրայ եւ սկսում է ծխել իր ծխախոտը կամ նարգիլէն, խմել սատէ (պարզ, առանց շաքարի), դառն զահվէն եւ լուռ ականջ դնել աշուղներին, որոնք մոմի վրայ փակցված ամեն մի գումարի չափի համեմատ ոտանաւոր գովեստ են կարդում նրա տվողին եւ ապա շարունակում իրանց մրցումը։ Շրջանակի վրան երբեմն այնչափ ստակ է հաւաքվում, որ կազմում է բաւական խոշոր գումար, տասնից մինչև յիսուն եւ երբեմն հարիւր լիրա, նայելով աշուղի անուան։ Այդ ստակը կամ առնում են մուամման ասացող աշուղները եւ կամ, եթէ չը կարողացան, առնում է մուամման շինողը, միաժամանակ համեստութեամբ միւսներին էլ զատելով գոհացուցիչ բաժիններ։ Այսպէս քաղաքի ամեն բնակիչներն էլ իրանց համար գտնում են զբօսանք, խօսում են, զուարճախօսութիւններով ու առակներով պարապվում, շատերը կատակախօսութիւններ են անում դահուէտան կամ կաղինի սպասաւորի հետ եւ այսպէս անցկացնելով իրանց ժամանակը մինչև կէս գիշեր, տուն են վերադառնում, խմում մի քանի բաժակ ընտիր գինի, „տաքը կը կարէ“ ասելով եւ ընթաթաթախ մտնելով անկողինները, քնում են՝ առանց իմանալու մշուկների կծոցները, որոնք ահագին բանակներով թափվում են իրանց անզգայացած օրսերի վրայ։

Թիւրք կառավարութիւնը հայկական խնդիրը եւ շարժումները երևան գալուց ի վեր այնպիսի կարգադրութիւն յայտարարեց, որով հայերը երեկոյեան ըստ Թիւրքաց ժամը 12-ից յետոյ այլ ևս իրանց տներից չը պիտի դուրս գան, Թիւրք ժողովրդին միայն յատկացնելով երեկոյեան զբօսատեղիները։ Հայերին մինչև անգամ արգելված է զբացիական յարաբերութիւնը... Թէև շատերը մի կերպ խոյս տալով բռնութեան այդ ստեղծած անտանելի հրամանից, գաղտագողի աջողում են մի տեղ ժողովվել եւ իրանց դարդերը լալ...

Այդ ընտանեկան համեստ գումարումներից մէկը տեղի էր ունենում հայոց թաղի մէկ անշան փողոցում կառուցված մի փոքրիկ տան մէջ։ Գիշերային շրջող պահակները (զոյ) ամիսը մէկ անգամ հազիւ էին անց ու դարձ անում այդ մոռացված փողոցով։ Բաւական մեծ, ընկուզեայ քառակուսի մի սեղանի շուրջը ժողովվել էին տասնի չափ երիտասարդներ եւ տաքարեղացան, առնում է մուամման շինողը, միաժամանակ համեստութեամբ միւսներին էլ զատելով գոհացուցիչ բաժիններ։ Այսպէս քաղաքի ամեն բնակիչներն էլ իրանց համար գտնում են զբօսանք, խօսում են, զուարճախօսութիւններով ու առակներով պարապվում, շատերը կատակախօսութիւններ են անում դահուէտան կամ կաղինի սպասաւորի հետ եւ այսպէս անցկացնելով իրանց ժամանակը մինչև կէս գիշեր, տուն են վերադառնում, խմում մի քանի բաժակ ընտիր գինի, „տաքը կը կարէ“ ասելով եւ ընթաթաթախ մտնելով անկողինները, քնում են՝ առանց իմանալու մշուկների կծոցները, որոնք ահագին բանակներով թափվում են իրանց անզգայացած օրսերի վրայ։

Թիւրք կառավարութիւնը հայկական խնդիրը եւ շարժումները երևան գալուց ի վեր այնպիսի կարգադրութիւն յայտարարեց, որով հայերը երեկոյեան ըստ Թիւրքաց ժամը 12-ից յետոյ այլ ևս իրանց տներից չը պիտի դուրս գան, Թիւրք ժողովրդին միայն յատկացնելով երեկոյեան զբօսատեղիները։ Հայերին մինչև անգամ արգելված է զբացիական յարաբերութիւնը... Թէև շատերը մի կերպ խոյս տալով բռնութեան այդ ստեղծած անտանելի հրամանից, գաղտագողի աջողում են մի տեղ ժողովվել եւ իրանց դարդերը լալ...

ԻՆՉ ԿԸ ԽՕՍԻՆ ԱՆՈՆՔ.

Եւ փէսլիներն ցածր Դրան փրփուրն իրենց բաց բերին,
Բարկութենէն գողալով, գայլի պէս սրած ակռանին,
Մութ որջին մէջ խռնած են։
Զար բաղդին դէմ մոլեգնած, անոնք մեր դէմ կատղած են
Եւ ժահրն իրենց դէշ սրտին մեր վրայ առատ կը թափեն
Եւ մեր ինչքը կը լափեն։

Եւ մեր ինչքը կը լափեն, և այսպէս մեզ կը խօսեն.—
„Կեավո՛ւր ստրուկ, անպիտան, ինչ ես ելեր քո տեղէն՝
Ցիմար գլուխդ տարցուցած։
Քեզ չի՞ բաւեր այն պատիւ, որ սուլթանին սուրբ ոտաց
Կոխած փոշին կը լիզես, անոր թուքը կը կըլլես,
Անոր փսխունք կը ժողվես։

„Ինչ է, քեզի քիչ եկաւ հաւատարիմ ու խանարհ
Շան մը պատիւ վայելես, մեր սուլթանի մեծափառ
Բայեան ըլլաս յաւիտեան։
Կեավո՛ւր, քո ինչք ու կրնիկ, որ կառնեն մեր հրամանով.
Միւսիւլմանի զաւակներ,— պէտք է անոնց տաս սիրով,
Ըսես — „ըլլայ ձեզ ղուրբան“։

„Ի՞նչպէս ապրի վեհ սուլթան պատշաճ փառքով ու շուքով,
Ի՞նչպէս ապրին պաշտօնեայք՝ գրաղուած բարձր գործերով,
Ի՞նչպէս ապրին մեծատուն,
Ի՞նչպէս ապրին զօրքերը, համիտիեէներ, մեծանունք,
Թէ դո՛ւ, բայեա՛, չաշխատիս, մէջքդ, վիզդ չը ծռես
Եւ մեզի միշտ կերակրես։

„Ո՛հ քրտինք, որ կը թափես — մեր ապրուստը կը շինես.
Ծընած բայեա — գերի ես մեր ձեռաց տակ մշտապէս։
Այդ է վիճակդ որոշուած,
Այդ է կեանքի քո բաժին, այդ է պարտքդ սահմանուած.
Իրաւունքներ դու չունիս, դու պարտք մ՚ունիս սրբազան —
Միշտ կերակրել վեհ սուլթան։

„Իսկ թէ կուզես այդ պատուէն և այդ խաղաղ լաւ կեանքէն
Զրկուիլ ընդ միշտ և խօսիլ իրաւունքէն, օրէնքէն,
Ազատութեան ցընորքէն —
Դո՛ւն, խընդրը, սուլթանի արքայական բարկութիւնն
Շանթեր գլխուդ կը տեղայ, որ զարմանայ մարդկութիւնն
Արհաւիրքէն, անէծքէն։

„Հաւատարիմ քիւրդերը, արիւնծարաւ ու գաղան,
Ընթիւ, անչափ զօրքերը, պաշիպոզուկք զանազան,
Թիւրքեր, չէրքէզք ու չէչէնք
Վեհ հրամանով, առնելով թնդանօթներ, սուր ու զէնք,
Կեավուրներիդ գիւղերը պիտ թալանեն, աւերեն
Եւ ամենքիդ կոտորեն։

„Դաշտեր, լեռներ ու ձորեր, անմատչելի իսկ վայրեր,
Ամեն տեղ ձեր արիւնը պիտ հոսի իբր հեղեղներ.
Կը հրդեհուին ինչք ու շէն,
Մայրը մանկան չի ճանչնայ, կառնեն կընիկը այրէն,
Ձեր դիակներ բիւրերով կը լինեն կուր գաղանաց —
Ահա՛ գործը մեր ձեռաց։

„Ահա՛ գործը մեր ձեռաց, թէ դուք չըլլաք մեզ ըստրուկ
Թէ ձեր ստակ, գիւղ, աշխատանք, կընիկ, աղջիկ ու մանուկ
Մեր կամքի տակը չըլլան . . .
Այդ է փառքը սուլթանի, ոյժը, կամքը, հրաման . . .
Թշնամական, աւազակ, դու սուլթանը կուրանաս —
Դրժոխքն ալ հոս կը գտնաս . . .“

20 Նոյեմբեր 94. ԽԵՆԴԸ.

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԵՄՈՒԼԸ ԼՕՆԴՕՆՈՒՄ.

Սուլթանի վայրենի կառավարութեան կատաղի հալածանքները, նրա ստոր գործակալների միջոցով մի քանի անգամ կատարած գողութիւնները „Հնչակի“ տպարանում և Հնչակեան կուսակցութեան կենտրոնի ու Հնչակեան ժամուլի խմբագրութեան անդամների կեանքի դէմ արած սպանութեան փորձերը, նրա բազմաթիւ լրտեսների խմբերը, վերջապէս նրա անընդհատ դիմումները հեղլէն կառավարութեան՝ մեզ Յունաստանից արտաքսելու պահանջով — այդ բոլորը Հնչակեան ժամուլի գործի, մեր հանդէսների կանոնաւոր ու ազատ հրատարակման առջև ստեղծեցին մեծամեծ խոչընդոտներ։ Այդ խոչընդոտների դէմ մենք մաքառեցինք դրեթէ ամբողջ երեք տարի, այսինքն սկսած այն օրից, երբ „Հնչակի“ տպարանը փոխադրվեցաւ Ամէնք։ Իրենք վիճաբանում էին։ Բազմոցի վրայ ծալապատիկ նստոտել էին մի պառաւ կին և մի ծեր տղամարդ. նրանք ուշադրութեամբ ականջ էին դնում երիտասարդների խօսքերին։ Դէրը երբեմն-երբեմն կիտում էր սպիտակացած յօնքերը. նրա ճակատի վրայ երևան էր գալիս խորը կնճիռների մի շարք, իսկ երբեմն էլ թեթև կերպով շարժում էր իր գլուխը և խորը հառաչում։

—Ի՞նչ կը կարծէք, Համբար վարպետ, ասում էր մի տաք գլուխ երիտասարդ՝ զայրացած շեշտերով.— կը կարծէք թէ հայը բահաթ (հանգիստ) օրեր պիտ տեսնէ ասկից վերջ։ Օ-հո՛... ադ ամենը խ ա յ ա լ (երևակայական) փիլաւի են մեզի համար, ադով մենք մեզի խաբելէն զատ՝ ուրիշ բան չենք աներ. երազներով ապրելու վախտը շատոնց է անցեր. հայը նորէն եէնիչէրիներու ատենուան կեավուրն է...

—Մենք էլ գիտենք ադ բանը, լաբին (բայց) ինչ կուգայ ձեռքերնուս, ախբար. մեր աղաներն իրենց շահուն, իրենց բահաթութեան եւ իրենց քէյֆին ետեւէն են։ Շատերուն բանը գործը միւղէվիրութիւն է, շատերն էլ օգուտ չը տալէ զատ՝ ադին տունը քանդելու հերիք են։ Քանի, քանի աղաներ գիտեմ, որ ասկէց տասը տարի առաջ աս ու. ան մարդուն կտրած տաց ամանները կարկտելով, շուկային մէջ էսկիճութիւն (հնակարկատ) անելով, կիւճ պէլա կիւճ (հաղիւ հաց) օրական ապրուստին կը հանէին։ Լաբին աս օրվան օրս կաթոլիկներուն պապին պէս քիչ է մնացեր, որ իրենց ոտքերու մեծ մատները երկնցնեն մեզ, որ պագնենք։ Է՛հ, ինչ երկարեմ. ահա՛ Պապին լաւ գիտէ, թէ ինչպէս հարստացեր են ադանկները, ասաց նա եւ դառնալով ցոյց տվեց ծերունին ապա շարունակեց.— ուրը ժամուն վէքիլ (երեսփոխան) եղեր է, ուրը ժամկոչ, ուրը թաղական, ուրն էլ մահլէի մուխթար (թաղապետ)։ Հապա մեր սև գըլուխները, եկող առաջնորդները, պատարագ ասեր՝ առեր են, խունկ է ասեր՝ առեր են, աջ համբոյր է, խաչ համբոյր է, մոմունք է, ս. Յակոբին ըղունգն է, ս. Թորոսին ակռան է, չը գիտեմ որ սուրբին ծունկի ոսկորն է, պտղի է, հաւասը անիծեմին ուր մէկը համրես, ախբար, ծայր ճօթ չունի. . . Իշտէ (ահաւասիկ) այսպէս սիւլիկներու նման ադգին արուն են ծծեր եւ ուռեցեր, ժամուն սնտուկն են պարպեր փորերնին լեցուցեր . . . Է՛հ, օր մը հարամ փարան անոնց փորը կը ծակէ, ըմմա մեր էլ օճախը կը մարի։

—Ատոնց ամենքն էլ մէկ տախտակի վրայ ըղցնելիք շուներ են . . . Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ, ասաց Միրջանը գլուխը աջ ու ձախ շարժելով։ Էլ ամենէն խելօք կարծածներս ահա մօստուրան (նժոյշ) տեսանք, անուն էլ ինչպէս գտեր տէ ճակատին են փակցուցեր։

—Շէյխէն յետոյ դերվիշ մ՚ալ պէտք էր մեզ, ակնարկելով Աշըգեան պատրիարքին՝ ասաց Մօսիկին Գրիգորը, որ մինչեւ այդ ժամանակ լուռ նստած ականջ էր դնում իր ընկերներին։

—Ի՞նչ անէր. հերիքը նեղը մնաց, ասաց Համբար վարպետը.— „դէնիզ գիւշէն ելանա սարըլը“ (ծովը ընկնողը օձին կը փաթաթվի)։ Խեղճը տեսաւ որ քսակին մէջ բան մը չէ մնացեր, պարտատէրերն էլ պօղաղին են չօքեր, անձէն, անձիւն գնաց տէրտէր եղաւ. հիմակ էլ փիլոնին ծէրովը ճանճ քշելու պէս պարտատէրերը կը վռնտէ կա . . .

—Ադ ամենը մէկդի, ինչ որ է մինչեւ հիմա մենք մեր եղովը կը տապկվէինք կա, հապա ինչ ասենք սա ՀԷՄՔԵԱՆ ըսված շանը. անեւես անամօթ անպիտանին,— ասաց Խալիֆա-Ստեփանը.— կարծես մերը մեզի հերիք չէր, հիմակ սկսեցին գուրսի շները մեր վրայ քըշքշլսմիշ անել։

—Իմ ձեզի այստեղ կանչելուս սէպէպն էլ հէմէն ադ էր, պոռաց Միրջանը։ Դուք տահա (դեռ) ինչեր պիտի տեսնէք, ինչեր պիտ լսէք, ա՛յ հաւատդ, օրէնքդ, ասաց նա եւ յանկարծ վեր թռաւ։

—Ամեն օր ան խենթն է, հէչ փարը (երբէք տարբերութիւն) չունի, ասաց ծերունի Մաքարիրոսը, յետոյ դառնալով Միրջանին, խնդրեց.— տղայ, եավրում (ձագուկս), ադ բնաւորութիւնդ օր մը չէ օր մը գլխուդ բէլա մը կը բերէ։ Ցետոյ ասոնք էլ բուկ ընկերներդ են. նայիր հէլէ մէկը էլ քեզի պէս կը կանչվռտէ կա։ Մի՛ ըներ, եավրում, խօսքիս մտիկ ըրէ. Ինչ կայ, խէրն օրհնած, դուն էլ նստիր ասոնց հետ եւ կամաց-կամաց ղուրցէ։ Ցետոյ դառնալով պառաւին, աւելացրեց.— Քա՛, հոգիդ սիրես, ջուր մը տուր, աս տղան խելօքնալիք չունի, ինչ պիտ անենք, չը գիտեմ։

Պառաւը տեղեցը շարժվեց ջուր բերելու, քթի տակից մնթփնթալով.— Աստուած, դու խելք տաս, չարը բարին դարձուցես. գլուխն ելլելիք մը կայ աս տղուն. հէչ ասանկ էլ ա-րունը տաք տղայ կըլլայ. տահա երէկ չարսուին մէջ ոյին չէր թողեր հաներ էր։ Աստուած դու խելք տաս, ինչ ասեմ . . . կրկնեց նա։

—Տէլի Պարգիսին պետոն աղէկ ճամբու պիտ դնէր ադ ՀԷՄՔԵԱՆ ըսուած դինսիզ իմանսրզին եա՛, ղահպէ թէրէսը շուտ հասկցաւ։ Աստուած հիմա խլեանէթներուն թարափէն է։

(կը շարունակվէ) ՎԻԹ.

Ճառախօսը՝ ոգեւորված.—„Միյո՛, Սասունցին ապատասխան է. Մեր սուրբ պարտականութիւնն է աւնոր խաչակրեալ, խմելով աւնոր կենացը...” [Ժափահարութիւններ...]

իր այդ դրութիւնն, ի հարկէ, երկար տեւել չէր կարող, և մենք, ապահովացնելու համար Հնչակեան կուսակցութեան մամուլի ազատ հրատարակումը, հարկադրվեցանք „Հնչակի” տպարանը հաստատել մէկ աւելի ազատ ու ապահով վայրում։ Այդ վայրը՝ Լոնդոնն է։ Այսուհետեւ „Հնչակը” հրատարակելով երկու շաբաթը մէկ անգամ, որպէս նաև ամեն ջանք գործ դնելով լուացնելու „Ապտակի” և „Գաղափարի” պակաս համարները, մենք կը շտապենք գոհացնել մեր ընթերցողներին և անպակաս դարձնել մեր երեք հանդէսների հրատարակման երկամսեայ ակամայ դադարը, որ՝ նրաժեշտ էր տպարանի փոխադրութեան համար Աթէնքից Լոնդոն։ Թող վստահ լինեն մեր բազմաթիւ կուսակիցներն ու բարեկամները, որ մեզ մի թիւրքական հսլածանք, որքան նա խիստ լինի, երբէք չէ կարող մեզ արգելք լինել բարեխղճաբար, անձնուիրութեամբ ու եռանդով միշտ կատարելու մեզ յանձնած և մեր ստանձնած ծանր ու պատասխանատու, բայց և քաղցր ու սուրբ պարտականութիւնները, մեր բոլոր պարտականութիւնները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ։

ԻՆՉՈՎ ԵՆ ԶԲԱՂՎԱԾ ՄԵՐ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ.

Ինչ որ դնում՝ ենք այստեղ՝ ներքեւ, բնաբոշ արդիւնքն է մեր ամերիկահայ հակառակորդների ընթերցման, խելացիութեան ու հանճարի, որ ուզում՝ ենք անմահացնել մեր.... „Ապտակով”....

—

„ԱՐՁԱԳԵԼ, ՀԵՌԱՄԲ ՀԱԿԱՀՆՉԱԿԵՐՆ
ՎԻՐԱԽՆԴԻՐ ԼԻԳԻՈՆԻՆ

„Հաճարիմք ի Հնչակեանութենէ եւ յամենայն խաբէութենէ նորա, ի Քրիստոսանախատ խորհրդոց նորա, ի հայակործան գաղափարաց նորա, յանբարոյական ընթացից նորա, ի դրամակուլ դարձուածոց նորա, յաստուածընկրոստ խրատուց նորա, ի հայհոյիչ ընութենէ նորա, յօտարամոլ քարոզութեանց նորա, ի չէաս-գերման հաւատոց նորա, ի հակակրօն վարդապետութեանց նորա, կարմիր-Մարքսական պաշտամանց նորա, յոսովայնապաշտ բանից նորա, ի մշտաշան աւազակութեանց նորա, ի յափշտակիչ էութենէ նորա, եւ ամենայն կեղծ եւ ազգադաւ գործակցութենէ նորա հրաժարելով հրաժարիմք։

„Եւ ապա դառնամք յԱրեւելս եւ ասեմք.— Հաւատամք զմի Աստուած Հայկայ եւ Վարդանայ։ Հաւատամք յԱրեւետարանն եւ ի Քրիստոս՝ յոր հաստատեալ կայ զԱզգն եւ զեկեղեցին Հայաստանեայց սրբագործեալ երկնանման զոհաբերութեամբ Աւարայրի։ Հաւատամք ի գոյութիւնն Հայութեան եւ զՀաբս մեր սուրբ տէր եւ պաշտպան նմին զՀայկ, զԱրամ, զՏիգրան, զՎահագն, զԱստաշէս, զԱրդաւազ, զՏրդատ, զԳրիգոր, զՎարդան, զՆերսէս, զՍահակ, զՄովսէս, զեղիշէ զՄեսրոպ, զՎարժապետեան զՍուքիասեան, և զպաշտելին մեր Խրիմեան։ Եւ վասն այս հաւատոց տամք զսրբին մեր եւ զԱզկեանս, զի ապրեսցի սոյնանման Հայութիւնն անարատ։“

—

Շատ ցաւալի է, որ այդ տեսակ „երեւելի գաղափարական հակառակորդները” ունենք... Աստուած նրանց օրն անպակաս արասցէ. Ամ. Ն...

ՆՄՈՅՇ
ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀՈԳԵՒՈՐ
ՀՈՎԻՆ
ՏԷՐՈՒՆԵԱՆԻ ՔԱՐՈԶԷՆ

„Սիրելի՛ ժողովուրդ,

Երբ Իսրայէլացիները Եգիպտոս գերութեան մէջ կը գտնուէին եւ սոխ ու սխտոր կուտէին, ան ատենը Աստուած կը պաշտէին. իսկ երբ Մովսէս ազատեց զանոնք եւ Աստուած մանանայ ու լորաձագեր կը ղրկէր անոնց համար, մոռցան զԱստուած եւ սկսան կուռքեր պաշտել... Ուրեմն, սիրելի՛ ժողովուրդ, կը տեսնենք թէ ազատութիւնը ինչ գէշ բանե կը բերէ...“

ԼՕՆԴՕՆ։ „ՀՆՉԱԿ”-Ի ՏՊԱՐԱՆ։

„Ա Պ Տ Ա Կ“
ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

„ԱՊՏԱԿԸ հրատարակելով, մենք ուզում ենք հայ յեղափոխական գործող մարմնին տալ մի նոր զէնք — երգիծաբանի ապտակը։ Այդ ապտակը՝ թաթախված հայ քաջերի արիւնով՝ պէտք է հարուածէ այն ամենքին, թէ արտաքին և թէ ներքին թշնամիներին, որոնք թշնամի կամ հակառակորդ յայտնվելով յեղափոխութեան, թշնամի և հակառակ են յայտնվում նաեւ հայ ժողովրդային բաղմութեան, աշխատաւորի, գեղջուկի եւ բանւորի շահերին։

„ԱՊՏԱԿԸ պէտք է զեկավարվէ այն վսեմ գաղափարներով, որոնք ժամանակիս ամենաառաջադէմ գաղափարներն են հանդիսանում հանրամարդկային առաջադիմութեան մէջ, գաղափարներ, որոնք արդէն փայլուն կերպով յայտարարված են հայ յեղափոխական ասպարէզում եւ հայ յեղափոխականի գործերով որ արիւնով արձանագրված են Հնչակեան դրօշակի վրայ։

„ԱՊՏԱԿԻ լեզուն կը լինի միշտ անկեղծ, համարձակ, շիտակ, համոզված ու խիստ։ Իր հարուածի տակ նա կը դնէ ամեն հասարակական հիմնարկութիւն եւ հասարակական անձեր, որ հայ յեղափոխական առողջ գաղափարին և ժողովրդի շահերին վնասակար են։

„ԱՊՏԱԿԻ բոլոր համարներում միշտ կը զետեղվին նկարներ քաղաքական պարունակութեամբ։